ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

23.05.2016թ. կնքված N ՇՀԾՁԲ-15/2-3-5 գնման պայմանագրի

ք. Երևան «24» մայիսի 2016թ.

ՀՀ սահմանադրական դատարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Հակոբյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և **«Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Գրիգորյանի**, որը գործում է *Ընկերության* կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով **23.05.2016թ. կնքված N -ՇՀԾՁԲ-15/2-3-5** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.3 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանագրի առարկա Ավիասպասարկման ծառայության մատուցման պայմաններում տեղի են ունեցել չկանխատեսված փոփոխություններ՝ այն է կատարվել է ավիատոփմսերի փոխանակում, և հաշվի առնելով ՀՀ գնումների մասին օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետի 4-րդ ենթակետը, կողմերը որոշեցին՝

Պայմանագրի գնից բացի՝ լրացուցիչ կատարված ծառայության դիմաց վճարել 143515 դրամ՝ ըստ համապատասխան թիվ 01 փոխադարձ ակտի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը է **1 էջից**, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ սահմանադրական դատարան ք. Երևան, Բաղրամյան-10 Բանկ՝ՓԵՆ աշխատակազմի գործառն. վարչություն Հ/Հ 900011179083 ՀՎՀՀ 00018357	«Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ ք. Երևան, Վարդանանց 4 «ՎՏԲ Հայաստան» բանկ ՓԲԸ Հ/Հ 16048073241300 ՀՎՀՀ 00030747
(ստորագրություն)	(ստորագրություն)

Փոխադարձ Ակտ

Տրվում է ՀՀ սահմանադրական դատարանին առ այն, որ «Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ-ից 2016թ. մայիսի 13-ին ձեռք է բերվել 3 ավիատոմ՝ 1 հատ բիզնես /# 2572400192080/ Հարությունյան Գագիկի և 2 հատ էկոնոմ կարգի ավիատոմս՝ /# 2572400192081/ Հովհաննիսյան Վոլոդիայի և / # 2572400192081/ Խաչատրյան Աշոտի համար՝ Երևան-Վիեննա-Կոշիցե-Վիեննա-Երևան ուղղությամբ:

2016թ. մայիսի 20-ին կատարվել է վերոհիշյալ ավիատոմսերի օրի փոփոխություն, որի արդյունքում գոյացել է հավելյալ վճար՝ բիզնես կարգի ավիատոմսի համար /# 2572400192086/ ՝ 73,111.00 (յոթանասուներեք հազար հարյուր տասնմեկ) ՀՀ դրամ, ինչ էկոնոմ կարգի 2 ավիատոմսի համար /# 2572400192087, # 2572400192088 / ՝ 70,404.00 (35,202.00x2) /յոթանասուն հազար չորս հարյուր չորս/ՀՀ դրամ:

Արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը պարտավորվում է «Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ-ին փոխանցել դուրս գրված ավիատոմսերի՝ 1,240,000.00 /մեկ միլիոն երկու հարյուր քառասուն հազար / ՀՀ դրամը, ինչպես նաև օրի փոփոխության հավելյալ վճարը 143,515.00 /հարյուր քառասուներեք հազար հինգ հարյուր տասնհինգ/ ՀՀ դրամ: Ընդհանուր առմամբ պարտավորվածության գումարը կազմում է 1,383,515.00/ մեկ միլիոն երեք հարյուր ութսուներեք հազար հինգ հարյուր տասնհինգ/ ՀՀ դրամ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Արմենիա Թրավել + Մ» ՍՊԸ	ՀՀ սահմանադրական դատարան
ք. Երևան, Վարդանանց 4	Հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 10
«ՎՏԲ Բանկ Հայաստան» ՓԲԸ	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 160-480-732-41300	Հ/Հ 900011179083
ՀՎՀՀ 00030747	ՀՎՀՀ 00018357
Տնօրեն՝	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ